*ՀՀ շրջակա միջավայրի նախարարության*
*գլխավոր քարտուղար Գ. Գույանին*

*ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*
*2023 թվականի հունիսի 26-30-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք գործուղման վերաբերյալ*

*Գործուղվող անձ*
*Իրավախորհրդատու Մարի Չաքրյան*

*Երկիր/քաղաք/ժամկետ*
*Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2023 թվականի հունիսի 26-30-ը*

*Հրավիրող կողմ*
*ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնապահպանական բաժին, «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայի քարտուղարություն:*

*Նպատակը*
*Մասնակցել Օրհուսի կոնվենցիայի կողմերի աշխատանքային խմբի 27-րդ հանդիպմանը:*

*Մասնակիցների շրջանակ*
*Կոնվենցիայի կողմ երկրների կառավարությունների ու կողմ կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՄԱԿ ԵՏՀ և այլ հարակից համաձայնագրերի քարտուղարությունների ներկայացուցիչներ, դիտորդներ, ԵԱՀԿ և Օրհուս կենտրոնների ներկայացուցիչներ, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ի դեմս «Էկո ֆորում» ցանցի անդամների:*
*Հայաստանից հանդիպմանը մասնակցել են նաև ‹‹Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն›› ՊՈԱԿ Երևանի Օրհուս կենտրոնի կազմակերպիչ Սիլվա Այվազյանը և ‹‹Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն›› ՀԿ երիտասարդական թիմի անդամ Անի Բարոյանը:*

*Օրակարգում.*
- ✓ *Պատերազմն Ուկրաինայում և կոնվենցիայի իրականացման խոչընդոտները*
- ✓ *Կոնվենցիայի և կից արձանագրության ու ուղղումների վավերացման իրավիճակը*
- ✓ *Բովանդակային հարցեր՝ հանրային մասնակցություն, հանրային իրազեկում, արդարադատության մատչելիություն և Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ (ԳՁՕ),*
- ✓ *Իրականացման ընթացակարգեր և մեխանիզմներ,*

- ✓ *Միջազգային հարթակներում Կոնվենցիայի սկզբունքների առաջմղման թեմատիկ նիստ,*
- ✓ *2022–2025 թվականների աշխատանքային ծրագրի իրականացման ընթացիկ հարցեր, ներառյալ ֆինանսական հարցերը:*

*<u>Ելույթներ</u>*

*Կողմերի աշխատանքային խմբի նիստը նախագահողի հարցին ի պատասխան, թե Հայաստանն ինչ քայլեր է ձեռնարկում ԳՁՕ ուղղումը վավերացնելու ուղղությամբ, տեղեկացրի, որ տարեսկզբին ընդունվել է ոլորտը կարգավորող օրենքը, որն ուժի մեջ կմտնի օգոստոսին, որ ներկայում մշակվում են համապատասխան իրավական ակտերը: Այդուհանդերձ նշեցի, որ Հայաստանը դեռևս պատրաստ չէ վավերացնելու այն:*

*Տեղեկացնեմ, որ Ուկրաինայի կառավարության ներկայացուցիչը նշեց, որ իրենք արդեն դիտարկում են վավերացման հարցը և, եթե խոչընդոտներ չլինեն, ընթացիկ տարվա աշնանը կվավերացնեն ուղղումը: Սա նշանակում է, որ այդպիսով ուղղումն ուժի մեջ կմտնի նաև այն չվավերացրած, բայց ստորագրման պահին կոնվենցիայի կողմ հանդիսացած երկրների համար, այդ թվում՝ Հայաստանի:*

*Օրակարգի մյուս կետի ներքո ներկայացրել եմ, որ Հայաստանը Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության շրջանակում անցած տարի մեկնարկել է տեղական ԲԿԳ, որի շրջանակում Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում նախատեսվում է էլեկտրոնային կանաչ հարթակ, որտեղ որոշակի պարբերականությամբ հրապարակվելու են քաղաքի օդի աղտոտվածությանը ու ջերմոցային գազերի արտանետումներին վերաբերող տվյալներ, ինչպես նաև կանաչ օրինակելի գործողությունների մասին տեղեկություններ:*

*Եվրոպական Էկո Ֆորում ցանցի ներկայացուցիչ Ֆրեդերիկ Հաֆենը, ողջունելով Հայաստանի ջանքերը, այնուհանդերձ կողմերի ուշադրությունը հրավիրեց, որ զարգացող երկրները դեռևս կարիք ունեն աջակցության՝ բարելավելու արտակարգ իրավիճակներում համարժեք գործելու իրենց կարողություններն ու ընթացակարգերը: Նա որպես օրինակ մեջբերեց Նուբարաշենի աղբավայրի այրման ժամանակ հանրությանը կոնվենցիայի դրույթներին համապատասխան անհրաժեշտ տեղեկատվությունը ժամանակին չտրամադրելու մասին Հայաստանի ՀԿ-ների բարձրացրած խնդիրը:*

*Ելույթների տեքստերը կցվում են (անգլերեն տարբերակ):*

*<u>Արդյունքներ</u>*

*Աշխատանքային խումբը որոշեց,*

- ✓ *Կոչ անել Կողմերին, այլ շահագրգիռ անդամ պետություններին և համապատասխան միջազգային կազմակերպություններին հնարավորինս աջակցելու Ուկրաինային Օրհուսի կոնվենցիան իրականացնելու գործում,*
- ✓ *Ողջունել ԵՏՀ տարածքից դուրս առաջին երկրի՝ Գվինեա-Բիսաուի միացումը Օրհուսի կոնվենցիային՝ բնապահպանական ժողովրդավարության համար Աֆրիկայում և ամբողջ աշխարհում նոր հորիզոններ բացելու համար,*
- ✓ *Շեշտադրել, որ բնապահպանական տեղեկատվության արդյունավետ հասանելիությունը աջակցում է Կայուն զարգացման նպատակներին և թիրախներին հասնելուն, մասնավորապես՝ 16.10 թիրախին (ապահովել տեղեկատվության հասանելիությունը և պաշտպանել հիմնարար ազատությունները), ինչպես նաև Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակային 2015-2030 ծրագրի և այլ համապատասխան միջազգային պարտավորություններին:*

- ✓ *Կոչ անել կողմերին՝ ֆինանսական միջոցներ հատկացնել ԵԱՀԿ-ին Օրհուս կենտրոնների հզորացման և գործունեության շարունակականության ապահովման համար:*
- ✓ *Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ երիտասարդությանն առավել ակտիվորեն ներգրավելու համար:*

*<u>Հանդիպումներ</u>*

*Օրհուսի կոնվենցիայի քարտուղար Էլլա Բեհլարովայի հետ առանձնազրույցում, նա տեղեկացրեց, որ կոնվենցիայի Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրի մասին արձանագրությանն ուղղված քայլերում Հայաստանին աջակցելու նպատակով փորձագետի հետ պայմանագիրը կկնքվի հուլիսին, որի մասին լրացուցիչ կտեղեկացնեն:*

*Կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեի քարտուղարության համակարգող Ֆիոնա Մարշալը առանձնազրույցի ժամանակ տեղեկացրեց, որ ստացել են բնապահպան ակտիվիստների հարցերով զեկուցող Միշել Ֆորստի նամակին Արտաքին գործերի նախարարության պատասխանը, որը քննելուց հետո եզրակացությունը կտրամադրեն կողմին, հավանաբար ընթացիկ տարվա աշնանը:*
*Նա նաև տեղեկացրեց, որ մոտ ժամանակներս Համապատասխանության Կոմիտեն կներկայացնեի ՇՄԱԳՓ նոր օրենքի վերաբերյալ դիրքորոշումն ու օրենքի համապատասխանությունը Հայաստանի վերաբերյալ VII-8a որոշման մեջ բարցրացված հարցերի լուծման առաջարկություններին և խնդրեց, որ Կողմը՝ Հայաստանը լրջորեն վերաբերվի Կոմիտեի պահանջին և համապատասխան միջոցներ ձեռնարկի:*

*Առանձին հանդիպում եմ ունեցել նաև ԵԱՀԿ ներկայացուցիչ Քրիստիան Մելիսի հետ: Նա տեղեկացրեց, որ սպասում են Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակի վերաբերյալ Հայաստանի որոշման կայացմանը, խնդրեց նկատի ունենալ, որ փորձի փոխանակման կամ կենտրոնների կարողությունների զարգացման համար գումար կարող են տրամադրել մինչև ընթացիկ տարվա հոկտեմբեր ամիսը:*

*<u>Պայմանավորվածություններ</u>*
*Կոնվենցիայի քարտուղարության համակարգող Մարինա Յանուշի խնդրանքով, պայմանավորվեցինք տրամադրել ‹‹Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն›› ՊՈԱԿ-ի կայքի լինքը, որպեսզի այն տեղադրվի կոնվենցիայի Քլիրինգհաուս հարթակում՝ Հայաստանում Օրհուս կենտրոնի գործունեության մասին տեղեկատվությունն առավել հասանելի դարձնելու համար:*

*Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու՝*
*Մարի Չաքրյան*
*6.07.2023*